415-ը արու է, 405-ը էգ։ Ապրում են դեռ հին նահապետական ձևով։ Պարապում են երկրագործութեամբ և մասամբ էլ անասնապահութեամբ։ Հողը բարեբեր է և արգաւանդ։

Գիւղն իր հողերով Նոր—Զուղայի Ս.զգ. երկսեռ Դպրոցներին է պատկանում, իսկ 30 տուն էլ սեփական հող ունեն*։ Հողագործները դպրոցներին տալիս են տարեկան մօտաւորապէս 200 խալվար ցորեն և գարի, իսկ պետական հարկ վճարում են 520 թուման։ Արտերը փռւած են գիւղի արևելեան և արևմտեան փէշերին, որ մեծ մասամբ ջրովի են. օգտւում են աղբիւրների ջրերից, որոնք բղխում են գիւղի ափերից. առանձնապէս նշանաւոր է գիւղի հարաւային կողմից բղխող աղբիւրակն. դա յայտնի է իր հարուստ և սառնորակ ջրովը, որ փոքրիկ առու կազմելով ոռոգում է Բոլորանի դաշտավայրերը։

Կրթական գործով այս գիւղը գերազանցում է միւս գիւղերից. ունի երկսեռ «Հայրիկեան» դպրոցը. շէնքը նոր է և բաւական յարմար, բաղկացած է 10 սենեակներից մի դահլիճով. այս տարի (1918) ունէր մի ուսուցիչ և ուսուցչուհի (օր. Հեղինէ Միրզայեան. ուղարկւած է Նոր—Զուղայի Յանձնախմբի կողմից) 120 աշակերտ-աշակերտուհիներով։ Դպրոցում կայ նաև մի գրադարան, որն ունի 100 հատորից աւելի հայերէն գրքեր։ Դպրոցն իր գոյութիւնն ապահովում է Նոր—Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի օժանդակութեամբ։ Գիւղն ունի գեղեցիկ մի եկեղեցի Ս. Ղուկաս անունով։

Այս գիւղի հայերն էլ սկսել են տարէց-տարի տնտեսապէս քայքայւել լոռերի և ինքնիշխան խաների յաճախակի թալանումների պատճառով։ Ահա այստեղ առաջ եմ բերում հարստահարութիւնների պատկերը, Քեզ գաղափար տալու համար.

1916 թ-ին տխրահռչակ Սալար-Մասուդ և Սալար-Ազամ խաները զինւած ձիաւոր խմբով չորս անգամ արշաւանք են գործում գիւղի վրայ և առնում 3098 թուման կանխիկ փող։

1917 թ. Մամ-Թաղին, որ ամբողջ շրջակայքի գիւղերը հիմնովին թալանել և բազմաթիւ գիւղացիներ դժբախտաց-

* 1/6 (1 դանգ) բաժինը պատկանում է Ն.Զուղայի Ս.Ամենափրկչ. հոգև. դպրանոցին։